

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Բարձրապատիւ Տ. Գարեգին վարդապետի Ցովսէփեան

Ի նկատ առեալ, զի «Արարատ» ամսագիր ընդ Ձերով խմբագրութեամբ ոչ ծառայէ նպատակի իւրում որպէս կրօնական թերթ և որպէս պաշտօնական բերան Ս. Էջմիածնի, թէև քանիցս արարեալ եմք Ձեզ նկատողութիւն։ Ուստի և այսու արձակեմք զՁեզ ի պաշտօնէ խմբագրութեան, ի տեղի Ձեր կարդեմք զբարձրապատիւ Տ. Մատթէոս վարդապետ Մատթէոսեանց և պատուիրեմք զամենայն թղթեանս և զհաշիւս վերաբերեալս խմբագրութեան «Արարատ» ամսագրի ընդ ստանալ առաջադրութեանս անվիջապէս յանձնել Տ. Մատթէոս վարդապետի։

թ. 665

5 Նոյեմբերի 1908 *թ.*

Տեղակալ՝ ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

Բարձրապիւ Տ. Մաստէոս վարդապետի Մաստէոսեանց.

«Արարատ» գոլով պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի՝ տպագրի հրամանաւ Վեհափառ Հայրապետի ամենայն Հայոց կամ՝ Տեղակալի Նորին և պարտի բովանդակել յինքեան կրօնական–եկեղեցական, գրական բանասիրական նիւթս խմբագրեալս ըստ ամենայնի համեմատ ոգւոյ Հայաստանեայց Սրբոյ եկեղեցւոյ։ Ի վերջին ժամանակս «Արարատ» չեղեալ է յիսկական նպատակէ և ի կոչմանէ իւրմէ, ուստի և արձակելով զՏ. Գարեգին վարդապետն Յովսէփեան ի պաշտօնէ խմբագրութեան, կարգեմ զԲարձրապատուութիւն Ձեր խմբագիր «Արարատ» ամսագրի։ Աներկմիտ եմք, եթէ դուք բարեխղճօրէն ի գործ եդեալ զեռանդն Ձեր և զաշխատասիրութիւն, արժանի կացուցանելոց էք «զԱրարատ» կոչման իւրում՝ որպէս պաշտօնական և նպատակին՝ որպէս կրօնական ամսագիր։

Յարակցելով, թէ պատուիրեալ եմք Տ. Գարեգին վարդապետի զամենայն թղթեանս և զհաշիւս վերաբերեալս խմբագրութեան «Արարատ» ամսագրի ընդ ստանալ առաջադրութեան իմոյ անմիջապէս յանձնել Ձեզ։

Թ. 666

5 Նոյեմբերի 1908 թ.

Տեղակալ ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԵՌԱԳԻՐ

Փոխարքայի ի պատասխան Ամենապատիւ Տ. Տեղակալի հեռագրի տուած հոկտեմբերի 30-ից.

Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի Տեղապահ Գէորգ Արքեպիսկոպոս Սուրէնեանցին.

Պատրիարք Կաթուղիկոս ընտրելու համար հաւաքուած պատգամաւորների կողմից Ձեր 30 հոկտեմբերի